ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱՐԽԱԼԱ

Գին է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒԼԻՍԻ 16 -ին. Թիֆլիս. №29

ეროვნული ბიბლიოთეკა

ԷՔՍ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ





Лит. С. Быхова

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր ընտանիքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայանեան

«ԽԱԹԱԲԱԼԱՆ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐԸ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան	12 ր.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75 % զեղչ։

Զրի կարդացողներին պէտք է նկարեենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՑԻ» ՕՐԱՑՈՒՅՑԸ

1911 ՅՈՒԼԻՍ 31 օր

16

Суббота ՇԱԲԱԹ Պասքայ

Լուսնի 4

17 (կիր.) Վարդավառ է. յիշատակ վառեցեալ սրտոց և հանգեալ սիրոց։

18 (երկ. շ.) Մեռելոց։ Զայսօր ի Խօջիվանս մեռեալք խնդան և կենդանիքն լան. իսկ աչքերներն մեր լլլան. զմատաղ սերունդն մեր աչքախիտուկ խաղայ և սիրտքն բաբախէ օրհորդաց-տիկնացելոց։

19 (երեք. շ.) Անանակոչութիւն սրբոցն կենդանի նահատակաց և ազգային խայտառակչաց հնոց և նորոց, յայտնից և անյայտից—որք ի խմբագրատանն «Մշակի» մտեալ խպատ տիրացու դառեալ են և քարոզեն զպահպանողականութիւնն զլիբերալականութեան շղարշով։

20 (չորեք. շ.) Պահք։ Ամսագարձ ռոճիկ ստացողաց. հայք վարժապետք, դայսօր, եթէ աղօթեսցին, ռոճիկք ստանայացէն։

21 (հինգ. շ.) Ուտիս. ով ինչ ունի կարէ ուտել—իսկ չունեցողն զահրումար կերիցէ և զառողջ լինիցէ։

22 (ուրբ.) Պահք։ Յիշատակ իսպանախ ուտելոց և պայծառատես զդանդուռ սիրողաց, բայց ոչ յազգէն Դանդուրեանց։ Զայսօր կարելի է և զՄուշայիդն գնալ և անդ ի մէջ երկուց աստղոց լուսնեակ քաշալ գլխով բաղմիլ և զով օդն կուլ տալ։

ՊԱ՞-ՊԱ՞-ՊԱ՞-ՊԱ՞

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

I

1. Հրամայեցինք, որոնց կարամբ հրամայել, զպարտսն, եթէ ունիցեն առ մեզ—շուտափոյթ մատուցեն. առ որ նախօրօք եւ շնորհեմք շնորհակալութիւն։

—

2. Պատուիրիմք Լեւոն Մելիք-Աղամեանի զխասիաթն փոխել եւ փոքր ինչ ՈՒՍՏԱՑՈՒԹԻՒՆ սովորիլ 'ի պատրոնաց իւրոց, որք զամենայն օր՝ ի ժամու եւ ի տարաժամու քամիլիօնապէս մտածին։

—

3. Եւ վասն զի զՀամբարձում Առաքելեանն ահա երկու շաբաթ է զինչ անյայտացեալ կայ եւ վախիմք, թէ նա դողեցեալ կայ. ուստի պատուիրեմք, որոնց հարկն է, արթուն հսկել, շուտափոյթ գտանել եւ վազվազակի կրկին բազմեցնել ի խմբագրատունն «Մշակի»։

—

4. Զտէր եւ պարոն Ատրպետի հարցանեմք, վասն Մահմեդ Ալիի այժմ ի՞նչ խօսի։

—

5. Զայս հրաման «կոնֆիդենցեալ» է, վասն որոյ հրամայեմք ոչ ոքի եւ ոչ մի զրոշի բան չասել։

—

ԿԻ-ԿԻ-ԿԻ-ԿԻՍ.

ԿԻՍԱՊԱՇՏՕՆԱԿԱՆ

II

Ցունիսի ամբողջ ընթացքում բաւականին զգալի շոգեր էին անում և ազգաբնակութիւնը խիստ վրդովւում, խիստ նեղւում էր դրանից։

Մենք նկատելով այդ, կարգադրեցինք, որ հով լինի և մի քիչ էլ ցրտեր ուղարկեցինք ամեն կողմեր—և յոյս ունէինք, թէ ազգաբնակութիւնը մեր արած լաւութիւնը չի մոռանայ, և մեզ շնորհակալութիւն կը յայտնէ, բաժանորդագրուելով մեր թերթին և կամ աւանսով փող կուղարկէ։

Այդպիսի բան ազգը չարաւ. մենք էլ—այժմս, նորից կարգադրեցինք, որ տաքեր լինեն—և ով այժ ունի թող մեր կամքին հակառակ է ու պարծենայ։

Կենտրոնական բիւրօ

«Խաբաբալայական»

Աղեղնագոչ կուսակցութեան

16-ն յուլիսի

ի տաք-տաք ժամու.

ի քաղաքն Թիֆլիս.

գրեցաւ զայս հրամանագիր։

ՊՕԼԻՏԻԿՈՒՐԻ ԸՆԹԵՐՑԵՄԻՆ

Ղզլբաշի հին շահ Մահմէդ Ալին, էն վուր Աղեսումը ապրում էր՝ էս վրայ էրկու տարին—հիմի գիդիք թէ ինչ է արի։

Լօթին վիր է կացի ու ջէր զագրանիցա է գնացի բաղնիսներում լողանալու, իժում էլ՝ էն դաչաղ Արսէնի հանդի—էդ բաղնիսիցը դուս է էկի, շուրիրը փոխած ու թուշ փախիլ է Պիտրոցկի վրով Աստրաբաթ։

Ղաչաղ Արսէնն էլ, Աստուած հոքին լուսաւորէ, գիդիք թէ մարթ էր. Աստուած գիդենայ, ուփրօ օրինաւոր քրիստոնայ էր քանց թու շատ հիմիկւայ միր դիպլիպիտոմաւորները։

Մէ ջէր էդ ղաչաղ Արսէնը, գիդիք թէ բան էր արի՞։

Իստորիէն կու գիդենաք—ծախում ին ամեն տիղ։

Վեր էր կացէ, ու Մէտեխի բիրթի նաչալնիկին ասիլ էր—դուզիմ, կօսէ, վուր բաղնիս գնամ, կօսէ։

Նա էլ ջուղար էր տէ՝ լաւ կօնիս, կօսէ։

Արսէնն էլ, չուրս սալդաթով, վից ղազախով ու տասնուէրկու չափարներով, հիտն էլ մէ օֆիցէր,—ղարաուլներով, գնացիլ էին մամ էրէկլի թէ Բէրութովի բաղնիսները։

Ըստիվունց է ըլում, վունց չէ ըլում, բաղնսումը խիլիմ խալխ է ըլում. Արսէնը շուրիրը հանում է ու մտնում է հաուզը։

Աֆիցրի իշտահն էլ գալիս է.—իս էլ վուր լողնամ, ինչ լաւ ու լազաթին բան կուլի, կօսէ։

Սա էլ շուրերը հանում է ու թողնում, գնում առչի օթախում. սալդաթներին էլ հրամանք է անում, վուր լաւ մուղայիթ կենան Արսէնին. իժում իվ վուր Աթամի թաւուր տկնրում է, մրտնում է հաուզ՝ լեղանալու, ու ձուարա է խաղում։

Մինչկլի էս՝ մինչկլի էն, էս մեր Օձելաշվիլի Արսէնը. հաուզումը ջնջիլները կամանց կամանց կոտրում է ու հանում ու անջնջիլ դուս է գալիս՝ շուրեր հաքնելու տիղ՝ ու տեհնում է աֆիցրի շուրեր, լազաթին մէ նմուտում փիքր է անում, հաքնում է էտունք ու դուս է գնում. սալդաթներն, ղազախներն ու չափարները բաղնիսից դուս էկած աֆիցրի շուրերով մարթուն, վուր տեհնում ին, վուտի վրա ին կաղնում, չեստ ին տալի ու դուռը բաց անում, սա էլ դուս է գնում։

Զին իմանում թէ Արսէնն է էլի։

Հէնց գիդեցիլ ին թէ մէ եաղ աֆիցեր է։

Հիմի միր Մահմէդ Ալին էլ էտ թաւուր բան է արի։

Շուրերը փոխիլ է լօթին, մրքին էլ պարիկ է դրի ու արի ու իմացի։

Առանց պարիկի էլ հիմի ինչ դժւար բան է մարթ ճանչնիլը, գիդիք էլի. շատ մարթիք կան, էս սհաթիս միր ճանաչներու մէջ, լաւ էլ գեղում ինք թէ ովքիր ու ը՞նչիր ին, համա սիրտը, հոքին չինք կանում իմանայ թէ ինչեմէն է։

Վուր ասած է

Դրսից գահանայ—ներսից սատանայ։

Մաշ։

Մահմէդ Ալի շահն էլ էտէնց էր։

Ա՛յ իս, մէ կար-միր գիդեմ, հեստի օրմին է վուր... վուր... Աստուած պահէ. թանխէք կուտայ ինչղդամ գուզիք. թէ վուր բանը թանխէքին նընգաւ ու թէկի մէքիչ ուրիշ թաւուր է բանը, էդ մարթը ուրիշներուն շուրերը կու հանիլ տայ—ինքը կի տկղոր կու ման գայ, միթոմ հրեշտակ է, ռանգն էլ դեղին, սև ու կանաչ է։

Էս խասիաթի բան է։

Շահն էլ էտէնց էր։

Լօթին ղաչաղ է։

Բաս էն լաւ է, վուր մարթ համ շնորք չունենայ, համ էլ լեզու՝ խօսիլ չգիդենայ։

Քանի գրօշ ածէ։

Հաիրը (եղանակը) հիմի ինչի է էսթաւուր։

Էտ էլ պօլիտէկուրի գուրձ է։

Մինք տեհնում ինք, վուր թաքաւոր մարթը, վունց վուր Մահմէդ Ալի շահը—իր խօսքիրը, խոստումները մոռանում է, ուրիշ բանիր է անում։

Բաղնիս է գնում լողանալու ու բաղնիսից գլուխը Բաքու ու Ռաշտ է դուս բերում։

Մինք տեհնում ինք, մարթիք էրեսանց օրինաւոր բանիր ին անում, որտից ժուլիկութիւններ փիքր անում. գուրձքերն էլ մատրաբազութին է ու մասամբ նորին, չարթուքեսանութին ու մասամբ նորին։

Մեղայ Աստծու։

Մինք տեհնում ինք կարմիրներին դեղին, սև ու կանաչ...

Բա էս վուր էսէ՞նց է, էն բանը կի էնէնց չի ըլի։

Եղանակը, հաիրը, կի իր խասիաթը չի կանայ փոխի՞։

Ղզլբաշի խալխն էլ էտէնց է հիմի։ Էրեգ ասում էին շահին չինք ուզում—էսօր, վուտաց տակին ոչխարներ ին մորթում, մատաղ անում։

Պօլիտէկուրի աշխարք է։

Քաղքումը հիմի միսը ինչու է թանգ։

Պօլէտիկուրի գուրձ է։

հոքին խատակ պօլէտիկուրի։

Քաղքումը վուր հաւերի հանգի հայրեր ունենանք ու հնգուհաւերի պէս սիկղէտարներ—էլի լաւ է վուր կանում ինք ապրի։

Էս խօլվերէն կի վունչի։ Խօլվէրի պօլէտիկէն էլ ուրիշ թաւուր է։ Ասկի համա գլուխը յիդ դրած ունէ, ու... փուրն է մտնում։

Ղզլբաշի նազիր Վիզիրներն էլ լաւ մարթիք ին այ։

Հեստի ին ժաժ գալի, կօսիս, վունչ թէ մարթիք, տղամարթիք ըլին,—դէմուդէմը էրէխէքի հանգի ին։

Սեփեհդարը շուտ շուտ խռովում է. ու փիս Նորահարսի պէս ամեն օր փախչում է դիւանխանից։

Նորահարսը վուր փախչում է էդ իստորիէն տեհիլ ինք, իմացել ինք։

Վա՛, մազալու բան է։

Հիմի ասինք պառաւ հարներն էլ ին փոխչում, էն վուր հինգ վեց վուրթիք ունին, ու վուրթիքն էլ խիլիմ խիլքի ին։

Էս էլ պօլէտիկուրի աշխարքի բաներեմէն է։

Մարթը վուր կնիկ ուզէ ու կնգայ վուտի չեքմէքը, առուֆլիքը սրբէ—էս ինչ է։

Տղա մարթը վուր վիկենայ ու մէ կնգայ վրայ փսակէ, փսակէ էնթաւուր դայիմ, վուր խիլքը կորցնէ ու կնգայ հրամանքով ժաժ գայ՝ էս ինչ է, դուք էս էլ, ով գիդա կօսիք, թէ պօլէտիկուրի գուրձ է։

Խանդիսխան էտէնց էլ է։

Համա խանդիսխան էտէնց էլ չէ։

Էդ թաւուր տղամարթը. մարթու գնացած կնգայ հանգի է։

Էն օրը գազէթներում գրած էր, «Հորիզոն»-ում էլ թարգմանիլ ու փեչտիլ էին։

—Մէ տղամարթ պարանոյ, կօսէ, էրկուհոքիսացել է, ու իրիք ամսական երեխայ ունէ փորումը, կօսէ։

Խալխը էդու վրէն խիստ է արմցի։

Վա՛, վունց կուլի, վուր մարթը էրկուհոքիսանայ, կօսէ։

Խալխը կօսիս թէ տուտուց է այ, իմ հոքին գիդենայ։

Թէկի տղամարթը կանայ մարթու գնայ, կնիգ ուզի ու կնգայ խիլքով ման գայ, նրա մատի շարժելուն մտիկ



Լիցէում դասախօսութիւն

—Ցարգելի պրոֆեսոր, սովորում ենք, սովորում, բայց ոչինչ չենք հասկանում ձեր աւանդած լեզուներից։

—Ինքս էլ ոչինչ չեմ հասկանում, վախիլ մեք—միայն ինչ անեմ. ուղղակի ազգասիրաբար և Հայաբնակներին յարգելու պատճառով եմ դասախօսում...

տա՞ յ—բաս էդ թաւուբ մարթը չի կանայ էրկուհոգիանայ։

Հիմի մեզանում քիչերը կա՞ն, վուր էրկուհոգիացած կի չէ՝ մէ բան էլ աւել ին։

Համա ասում ին էլի։

Միթում արմանում ին։

Զարմանում ին։

Պոլիտիկուրի գուրձեր է. միք աւտայ։ Պոլիտիկուրի գուրձերին շուտ էլ չպտի հաւտաք, չունքի պոլէտիկէն խափէբայութինի վրէն է կաղնած ու հիմքեր դրած։

Մահմէդ Ալիի շահութինը քանի գրոշ ածէ։

Կեղծած ու փալշիւ կարմիրները քանի փարայ ածին։

Սուտ ազգասիրները...

Ղուրթ մատրաբազները...

Զաթուքեանները...

Կոկորդիլի արցունքները...

Օձի փաղաքշանքը։

Դէլին աւետարանը...

Զորն ասիմ կամ զորն խոստովանիմ, —իս ու իմ հոքին,—ինքս էլ չիմ գիդի։

Դրանք պոլէտիկուրի ին։

Պոլէտիկութինը ջէր փալշիւութին է։

Մա՞ շ։

Խսթաբաս ամենայն հաուց
Դասպար աղա Հալաթուզով

ՄՈՀՄԵԴ ԱԼԻ ՇԱՀԻՆ

Բարև քեզ էքս-շահ
Միշտ փառքի ազահ,
Ու արեան ծովեր
Անցար հեռացար,
Բայց կրկին դարձար։

Բարև Իրանի
Միակ պաշտպանին
Եւ Հաժադանի
Մեծ հարազատին։

Բարև ողջ Նրանց,
Որոնք միշտ, անանց
Գիտեն կործանել.
Կամ «հինը» փոխել։

Չէ որ հին էիր
Դու մի ժամանակ,
Բայց նորոգուեցիր,
Որ նոր հնանաս
Եւ մի նոր անհաս
Պատուհաս դառնաս։
Բարև համշարի,
Քո գալդ բարի։

Խենթ

ԳԵՐՄԱՆԻ ԹԱՏՐՈՆԻՑ

Մի օր Երևանի ոստիկանապետին ներկայացրին թոյլտուութեան համար «Համլէտ» ապիշը։

Ապիշը կազմուած էր սովորական ձեով։ «Ամսի այսքանին, հայ դերասանական խումբը, մասնակցութեամբ տ. Սիրանույշի, կներկայացնէ՝ «Համլէտ», ողբերգութիւն 5 արարուածով, հեղինակութիւն Շէքսպիրի, թարգմանութիւն Ց. Խան-Մասէհեանի»։ Մեծ եղաւ զարմանքս, երբ պ. ոստիկանապետը Շէքսպիր եւ Ց. Խան-Մասէհեան անունները ջնջեց ևնրանց տեղը գրեց Ավերկիեւ։

Երբ ես հարցրի, թէ ինչո՞ւ է նա այդ անում, պատասխանեց, у меня въ каталогѣ значится переводъ Аверкіева։

Ես բացատրեցի նրան, որ Ավերկիևը թարգմանել է ռուերէն լեզուով, իսկ Խան-Մասէհեանը՝ հայերէն. բայց նա—«я ничего не знаю, у меня въ каталогѣ такъ»։ Լաւ, ասում եմ ես. իսկ ինչո՞ւ Շէքսպիր անունը... «А кто такой Шекспиръ, я его не знаю и въ каталогѣ у меня не значится это имя»։

Այդ դէպքում, ասում եմ ես, ջնջեցէք և Սիրանույշի անունը, նա էլ կատալոգի մէջ չկայ։—Ոչ, պատասխանում է ոստիկանապետը, այժմ աւելի մեղմ.—«Я знаю что онъ извѣстный актеръ»։

Ներեցէք, ասում եմ, պ. ոստիկանապետ, նա դերասան չէ, այլ դերասանուհի.—պ. ոստիկանապետը նայեց երեսիս զարմացած, կարծես ուզեց իմանալ՝ թէ արդեօք մի չար կատակ չեմ անում նրա հետ, բայց երբ համոզուեց իմ արած նկատողութեան անկեղծութեանը, դիմեց.

—«Позвольте, какъ это такъ, у васъ, написано «СИРАНУЙШЪ», который кончается на твердый знакъ, какъ это такъ, я первый разъ слышу женщину съ твердымъ знакомъ»։

Այլևս աւելորդ համարեցի բացատրութիւններ տալ Շէքսպիրի անուն թշնամուն։

Դերասան

«Le Rire»-ից

— ԿՈՏՐՈՒԱԾ ԾԱՂԿԱՄԱՆԻՆ —

(Սիւլի Պրիւդոմից)

Այն քո խնամած ծաղկամանին
Անհոգ դիպար հովհարով,
Վրան՝ մի ճեղք մնաց չնչին
Ու մոռացուեց շատ շուտով.
Սակայն յանկարծ այն վտանգուեց,
Վիժեց, ցամքեց նրա ջուր
Եւ ծաղիկն էլ արդէն թոշնեց...
Կոտրուած է՛... ձեռք մի՛ տուր։

Նոյնպէս սրտիս դիպար ձեռքով
Քո սիրելի ու քնքոյշ,
Ու որպէս չար մի հեգնանքից
Վրան մնաց անանց յուշ.
Ցրտիում է նա առաջուան պէս,
Իր տանջանքով լուռ, անլուր,
Բայց վէրքն սեռող խորն է այնպէ՛ս...
Կոտրուած է՛... ձեռք մի՛ տուր։

Մարիկ

ՄԵՆՈՒՐԵՆ ԵՐԳԵՐԻՑ

Դատնաշունչ կեանքի տաղտուկ օրերից,
Մենակ իմ սիրտը լալի՛ս է անքո՛ւն.
Հոգիս տարագիր կորչում ամենի՛ց,
Կորչում խանարում անդա՛րձ, անանո՛ւն...

Ա՜խ, երազներիս աստղերը սիրո՛ւն
Էլ չեն շողշողո՛ւմ, զուրգուրանք կարդում.
Մենակ իմ սիրտն ու հոգիս անտուն,
Որոնք լալի՛ս են անվե՛րջ, անհատնո՛ւմ...

Նարգիզ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ներսիսեան դպրոցի նախկին նիսիա տեսուչ եւ Ֆալշիվի ժենեռալ Ղալայշի Մարգարին

Ուստա Մարգար ջան!

Հրամանքդ յիշում ես, որ մի ժամանակ Նոր-Բայազէդում դալայչութիւն էիր անում և ես էլ մօտդ աշակերտ էի, գուցէ դու մոռացել ես, բայց ես շատ լաւ եմ յիշում, որովհետև քաշածդ ապտակների ցաւը մինչև այժմս էլ զգում եմ։ Յիշում ես այն ժամանակւայ Նոր-Բայազ. ծխական դպրոցի հոգաբարձուներ Մաթոս աղին, Սայադենց Զոհրաբին, Թումոենց Ստեփանին և Քոչոյենց Ալէքսանին։ Ես հաւոզած եմ, խընդրում եմ դու էլ համոզուես, որ սրանք դրպրոցապատկան ոչ մի կոպէկ չհամայնացրին, որի պատճառով էլ ուսուցիչները միշտ կանոնաւոր կերպով ստանում էին ռոճիկները։

Այսպէս շարունակուեց մինչև 1896 թիւը, այսինքն դպրոցների փակման տարին, (նը-

բանից մի քանի տարի առաջ դու դալայչի-խանէդ փոխադրել էիր Ղարս)։ Երբ 1905 թուին վերաբացուեց դպրոցը, և հարկաւոր եղաւ հոգաբարձուներ ընտրել, տեղացիները ասացին «ДОЛОЙ» հին հոգաբարձուները, նրանք էին գաղափարի տէր մարդիք են, մենք պէտք է երիտասարդներից ընտրենք, և ընտրեցին։

Այս հոգաբարձուները չնայած դպրոցապատկան փողերից չհամայնացրին, բայց և այնպէս գործել չկարացին։ Սրանցից յետոյ, ընտրեցին աւելի երիտասարդ հոգաբարձուների. բայց իրենց հների շինածը քանդեցին։ Անցեալ տարի հոգաբարձուներից մէկը 600 ռուբ. դպրոցապատկան փող գրպանեց և ծլուեց։ Նրանից յետոյ գանձապահ ընտրեցին իրենց կարծիքով աւելի բարեխիղճ և վստահելի մարդու, բայց սա էլ, չնայած ինքը ինտելիգենտ, ուսուցիչ մարդ էր, իր նախորդից մի 200 ռուբլի էլ աւել տակոշը արեց, էհ, ինչ արած, խեղճը վարակուած է եղել փողակու�թեամբ։ Այդ դէպքից յետոյ, ուս. ուսուցչուհիները 3 ամիս ռոճիկ չստանալով, ստիպուած էին Դովլաթենց և Ցարութիւն աղենց բաղչէքում վերջին մօդայի հիւթալից օդով կերակրուել։

Ինչպէս լսում ենք ամենասառնորակ և վճիտ աղբիւրներից, փողակեր հոգաբարձուների դէմ դատ է սկսուած այնտեղի հաշտարար դատարանում։ Ինչպէս լրագրներից իմացանք, («Մշակ» № 143) Նոր-Բայազէտում մի հարուստ մարդու կին, հոգեվարքի միջոցին իր ամուսնուն խնդրել է, որ իր մահից յետոյ, իր յիշատակին նէրներ չը-տայ ուսումնարանին, քանի որ հոգաբարձուները տանում են և ուտում, այլ աւելի լաւ կանէ, որ իր հարևան աղքատ որբերի պահպանութեան համար նպաստ տայ։ Ա-ֆէրըմ, ինտելիգենտ հոգաբարձուներ։ Մոռացայ ասել, որ 2 տարի առաջ, երբ ներկայ էի Նոր-Բայազէտում հոգաբարձական ընտրութիւններին, ի թիւս այլոց, ընտրուեց նաև մի պարոն. իմ հարցին թէ այդ պարոնի որ արժանաւորութիւնների համար ընտրեցին, հոգաբարձութեան նախագահը ասաց, որ պարոնը բանտում տուժել է և նրան բարոյապէս վարձատրելու համար ընտրեցինք. էհ, ձեզանում օրական 10 մարդ է բանտից արձակուում, եթէ բոլորին էլ ընտրէք, այն ժամանակ հոգաբարձուների թիւը աշակերտներից կանցնի էհ, հարնախա, դպրոցը դառել է հարիսա։

Վերջացնելով խօսքս, Մարգար ջան, խնդրում եմ մի քանի զարսեցիների զալայիս և ձեռնադրելով հոգաբարձու ուղարկես Նոր-Բայազէտ, որովհետև այնտեղ անկաշառ և ազնիւ հոգաբարձու ցերեկը ճրագով չի ճարուում։

Բարևներով քո бывшій աշակերտ

Փիստոն Ճլթեան

Օրդուբաթ 10 յուլիսի.

ԵՐԱԶ

Երազիս տեսայ.
Դարձել եմ փեսայ,
Սիրուն, փողաւոր
Մի հարս եմ առել
Եւ մեծ, փառաւոր
Դահլիճում բազմել։

Շուրջս ծառաներ,
Բոնսա, աղախին,
Անկեղծ ընկերներ
Եւ ազնիւ տիկին...
Մի խօսքով ողջը
Բոյը շնաշխարհիկ,
Երջանիկներից
Աւել երջանիկ...

Բայց երբ արթնացայ
Ոչինչ չգտայ.

Օ՜ երա՜զ, երա՜զ...
Ինչո՞ւ միշտ անհաս
Դու կաս եւ չկաս։

Խենթ

ՄԶԵՑԻ ՄԽՕՑԻ ԱՂՋԻԿԸ

Աւալի սրֆթայ արիք հետս մտնենք Մխօյի տունը։ Ահան ես կզիմ կը. դէ դուն ալ կգի, էլի կգի, շատ կգի, օր գլոխդ շիմին չգարկես ու ջարդ ու փուրթ էնես։ Սաղ-սալամաթ մտանք նես. վերև յառքին չաշես, հող կը լցուի բերանդ։ Աշէ, մէ յաչքիմ

ՖԵԼԻԵՏՕՆ

ԾԻՏԻԿԸ

I

Նէրան տեսայ Շաւնաբաթում
Տիմպլիպիտօ ածելիս,
Մերթ ճիպոտով չարաճճի
Իր փիսիկին ծեծելիս.
Սիրտս թնդաց, սիրտս խնդաց,
Աչքով-ունքով խօսեցինք,
Ես այստեղից, նա այնտեղից,
Լի հեշտանքով թրթռացինք...

Երեկոյեան հանդիպեց ինձ
Խարխուլ վանքի առաջին,
«Ուտեմ էդ սև, կեռ բեխերդ...»
Մրմնջաց իմ ականջին.
Էլ ինչ ասել կուզէ, խկոյն
Մտերմացանք սիրալի,
Ու թեանցուկ առաջ անցանք
Դէպի ձորը ծաղկալի...

Ես պաշտեցի սիրանէը
Այդ աղջկան հանելուկ,
Ես կոչեցի Նէրան—«ծիտիկ»
Իսկ նէ՝ ինձ «մուկ ու սեուկ...»
Նէ սոսկալով ինձնից հանդերձ,
Իմ ապիկար նենգ սեռից,
Մնում էր լուռ լանջիս փարուած,
Ու չէր թռչում ինձանից։

Նէրա մայրն էլ սիրում էր ինձ,
Միշտ կոչում էր—«մուկ ջան, մուկ...»
—Արի մեզ մօտ ամեն գիշեր—
Ուտենք խաշած չալաձուկ.
Ու ամեն օր շախ ու շուխով
Գնում էի նրանց տուն,
Ու իմ տեսքից խնդում էին
Մայրը, աղջիկն ու կատուն.

Այնուհետև այդ Ծիտիկը
Դարձաւ մաստակն իմ բերնի,
Ու սկսայ աղօթք կարդալ—
Որ նէ երբէք չմեռնի.
Շուտով թողինք Շաւնաբաթը,
Իջանք քաղաք դար-դատարկ,
Նէրանց թողի Շան-թաղումը
Ու ես եկայ Սօլօլակ։

II

Միւս օրն ևեթ այց գնալով,
Գնած գտայ Ծիտիկին,
Ու խոնարհուած զգուշութեամբ
Համբոյր տուի ճիտիկին.
Մայրը՝ Նուշկէն միւս սենեակում
Վառ մոմերի լոյսի տակ,
Ծեծկելով իք դէմքը գիրուկ,
Թուղթ էր բացում ի գուշակ...

Զնայելով այդ խեղկատակ,
Ցիմար կնոջ արարքին,
Իմ Ծիտիկի ճոխ բուդվարում
Բազմած տեսայ կոլբրուգգին
Տեսայ նաև Դիցգէն ու Սմայլս,
Ռէյմոնտ, թախծոտ Էդգար Պօ,
«Արեան ձայներ», աջաբանդալ,
Երազահան ու Պէպօ...

Եւ պատկերը—Այնօ-Ակոէ,
Դունկան, Դուզէ ու Ռըժան,
Քաղցրաւենիք, գրքեր, սրգեր,
Խեցամանով արաժան...
Իմ պատկերն էլ Շաւնաբաթից
Բերել, գամել էր պատին,
Ափսոս, սակայն, ըմբոստ մի ճանճ
Կէտ էր դրել սրփաթին.

Դեռ խենթ մայրը դանդաչում էր.
Ես մօտեցայ դաշնակին,

մէջ Մխօն, անոր կնիկն ու երէխէքը, կոմն ու մոդին յիրա հետ սիրով սաւտով կապրին։ Կոմն ու մոդին իրենց գարմանը կուտեն, Մխօն ու իրեն օղուշաղը ռբսի սոմին կուտեն։ Մխօյի կնիկը թրիք թոփ կէնէ, աթար թիէ կը, ձմեռայ համար վառելիք հաղրէ կը։ Մխօն էլ փալանը շալկին սարախանէ տէյմօր յիրիկուն աւարաաղամութեն կենէ կը, հալալ աշխատանքով ցամաք հացիմ գին անջախ հանէ կը։ Տունը իրենը չէ. տարեկան 12 բուբլի տան քիրայ կուտա կը։ Մխօյի ու կնկայ շորերը չեշիտ չեշիտ կտորներով անքան ին կարկտէր, օր չիս կընայ հասկնայ, թէ Մխօյի շալվարը թազայ վախթը ինչղ կտորից է էղիր։ Դէ, հերիք է. էլի կզի, գենայ կզի, դուս յէլենենք։ Փառք Աստծու սաղ-սալամաթ յելանք։ Դէ հիմի էրթանք Ալէքսանդրեան ուլիցը, քիչ գեազմիշ յբլլինք։ Անտեղ, խանումներ, քեարսալայ յաշկերտներ, չեշիտ-չեշիտ կավալերներ իրենց խանումների հետ զուգած նազկրթելով ծակթելով սէյրանլամիշ գլլին կը։ Ա՛ս բիթուն լաւ. հլբադ ունին օր հագնէն կը. աշխրքի հախից գուգան կը։ Դէ հիմի լաւ աշէ. տես, ան 12 տարեկան աղջիկը, մոդնի լան շլեափէն գլոխը, թազայ ֆօրմի դարիան, բէդիկուլն ալ ձեռը, շորորալով գեազմիշ գբլլի կը։ Եավաշ, մօտենայ, տեսնինք վո՞ր ափիցարի աղջիկն է։

—Ես ճանչեցի. մեր դրկից կապիտանի աղջիկն է։

—Չէ, եանղլիշ իս. բերթի պոլիսմէյստրի աղջիկն է.

—Չէ, ջանմ, չէ, եավաշ, մօտենայ տեսնինք վո՞վ է, ատ թապառուկը։

—Ծօ, ես ճանչեցի, մշեցի Մխօյի աղջիկն է։

—Վո՞ր Մխօյի։

—Նոր օր կուզէ-կուզ մտանք ան գիլու բունը։

—Եավաշ հարցնինք, անիկ չէ։

—Աղջի, դու մշեցի Մխօյի աղջիկն իս։

—Այո։

—Տօ, գետինը մտնիս, հօրդ ղլղին ուրմիշ գուգայ կը ատ շլեափէն ու բէդիկուլը։

—Ցօրի քզի գեօրայ ինչ կայ։

Վա՛յ, վա՛յ,վա՛յ։Մուշ, մշեցի,Մխօյի,Թրիք, Կրվ, մօզի ու ատոնց կողքին բեդիկուլ, դէ ըսէք տեսնիմ, վո՞ր Աստուածը դաբուլ կենէ։

Սալթ իսիկ չէ, մեր քաղաքը շատ ասպէս Մխօյի աղջիկներ կան, օր իրենց հօր ու մօր ղլղին շուրութին, չեշիտին չեն աշի, ափիցարներու հետ յոտքները յերկնցնին կը։ Թող ֆողը գլխուն տայ մշեցի Մխօն, իշու պէս դադի, գիշեր ու զօր չամռի, զիբիլի մէջ չարչրուի, օր աղջկան մօդնի բեգիկուլ ու շլեափա հասցնէ։

Վա՛յ, մօդա իջատ էնող, տունդ քանդվի, դուռդ սև քարով շարէ։

Ղալայշի Մարզար



Ճգնաժամ

—Խնդրում եմ, բժիշկ, ասացեք իրական ինչ է հիւանդը, ասացէք միայն ճիշտը։

—Հիւանդութիւնը վտանգաւոր է։ Ներկայումս դժբախտաբար ճգնաժամի մէջ է հիւանդը. ես ոչինչ վճռական բան չեմ կարող յայտնել, բայց մի բանում միայն դուք լաւ էք արել, որ այսօր ինձ հրաւիրել էք այցելութեան, այլապէս եթէ ես այսօր չգայի, հիւանդը վաղը չէր լինի։

«ՓՈՂՐԱԹ» ԸՆԿ.

ՊԱՅՄԱՆՆԵՐ ՃԱՌԱԽՕՍՆԵՐՆԻՆ

Ան...ա՜ն...ա՜ն...
Անպաշտօնական

Որովհետև մեր ճառախօսները շատ են անհանգստանում իրենց պայմանների համար, ուստի յայտարարում ենք պայմանների միմիայն մի քանի գլխաւոր կէտերը։

§. 1.000. Ճառախօսը, ֆրակով կամ սիւրտուկով*) կատանայ մի ֆունտ քիշմիշ լաբլաթ...

§. 1.000.000. Զոր ու ցամաք և առանց տոնի և անջրալի խօսողներին մի փութ «ալուչայ», որ բերանները ջրակալի և ջրալի խօսեն։

*) Ընկ. խնդրում է ճառախօսներին յանուն Քրիստոսի... յանուն Գասպար-աղի քաչալ գլխի, ֆրակները կամ սիւրտուկները եթէ «նապրակատ» վերցնելու լինեն, այնպիսի մարդուց վերցնեն, որ «ճառի ժամանակ չգայ եախաները բռնի և ասի «ֆռակս տուր»։

Ու իմ ուժեղ ակկօրդն իսկոյն
Վեր թրռցրեց Ծիտիկին.
«Մուկ ջան, մուկ ջան...» քնաթաթախ
Վզիս կպաւ նէ մոլոր,
Ու մի մաղձոտ հայեացք նետեց
Դէպի խուցը իր խենթ մօր.

Մի՛ մեղադրիր—ասաց նէ ինձ
Նէ մի վէրք է, պատուհաս...
Ամօթահար ցաւն այդ անանց
Ես տանում եմ հաղիւ հազ.
Հիւանդ է նէ. ապրում է միշտ
Իր ցնորական սրբի մօտ,
Եւ չի ուզում լսել ոչինչ
Նէրա հոգին թուլացկոտ։

III

Բայց... սուս... յանկարծ միւս սենեակից
Լուեց մի լաց ու կական—
«Մամա... մամա...» կանչում էր մի
Կերկերուն ձայն մանկական.
Նէ վեր ցատկեց, ցնցուեց, դողաց,
Հարուած տուեց դաշնակին,
Շիկնեց այտերն ու թուլացած
Լուռ ընկաւ իմ կռնակին.

Չէ, չեմ կարող էլ թագցնել,
Ես մի մայր եմ ապիկար,
Բայց դեռ կոյս է հոգիս խռով,
Ես այրի չեմ հեշտաւառ.
Վաղուց է որ ափսոսանքով
Թողել եմ չար ամուսնուս,
Շեայտ էր նա, խժում էր խիստ,
Ու երգում էր միշտ անյոյս...

Նա իր ամբողջ կեանքն ու հոգին
Նուիրել էր հայ գրին,
Տաղանդ էր մեծ ու ապրում էր
Իր ցնորքի թեւերին.
Իմ ժառանգած ինչքը վատնեց
Եւ չգիտեմ կորաւ ո՞ւր,
Եւ մանկանն էլ ձգեց ինձ մօտ—
Իբր յիշատակ մի տխուր.

Բայց նա կըգայ—այդ ոխերիմ
Մուղալինոն հայկական,
Այդ սիրելի, խենթ ու խանդոտ
Տաղանդաւոր սրիկան...
Մի օր անշուշտ ես զոհ կերթամ
Նրա շողուն դանակին,
Նա կըսպանէ և իմ մօրը,
Գուցէ և իր զաւակին...

Նա տակաւին լուռ ու մռայլ
Ցաճախ գալիս է Թիֆլիս,
Եւ տեսնելիս ինձ փողոցում,
Խենթի պէս խոյս է տալիս.

Սակայն նիհար նրա դէմքին
Մահու տանջանք է հոսում,
Եւ զոյգ յոգնած աչքերը պիշ
Գալոց ոճիրն են խօսում...

IV

Շուտով եղայ գիշերօթիկ
Ծիտիկիս մօտ աննման,
Սակայն խօսքը մեր մէջ լինի,
Դողում էի շան նման.
Թէ՝ մի գուցէ այն խելագար
Մուղալինոն մի օր գայ,
Ու ինձ գտնի այդտեղ ընկած,
Բռնի, մի լաւ քօթակ տայ...

Շուտով կարգին հաստատուեցի
Այդ հանելուկ օջախում,
Ու նամակներ գտայ անչափ
Նրանց քունջ ու պուճախում.
Եւ հասկացայ այդ օրուանից
Թէ ես ո՞ւր եմ տուն ընկել,
Թէ ի՞նչու էր Մուղալինոն
Գլուխն առել ու կորել...

Նոր հասկացայ, թէ ի՞նչու էր
Գրքաց Նուշկէն տարփաւառ
Ուշ գիշերով գիրկս գալիս
Ու ինձ սիրում խելագար,

§. 2.00.000. Ճղճղացող և գոռացող ճառախօսներին, չորս հատ հնդուհաւի ձու, իշտահը և ձայնը բացուելու համար։

§. 199999. Ողբերգական-լալկան տոնով խօսողին Աւ. Ահարոնեանցի «Արցունքի հովիտը» մի օրինակ։

§. 111.111. Ճառախօսները անպայման պէտք է խօսեն ուղիղ 8760 ժամ ոչ աւել, ոչ պակաս, աւել կամ պակաս խօսողները կրզրկուեն բոլոր իրաւունքներից և կաքսորուեն դէպի «Марсъ» օդափոխութեան։

§. 1000. Ուղերձատատոյցներին, նուիրատատոյցներին, փողատատոյցներին և զանազան մատոյցներին ոչ մի պայման, միմիայն «մուքթա կուբо то есть թոռ, մուքթա բիլեթ». կլտանք յորելեանին ներկայ լինել ցանկացողները կարող են դիմել ընկ. և կոնտրամարկաներ ստանալ։

Իսկականի վրայ սատրագրեցի
ձախ ձեռքովս

Խորէն-Ժան-դը-Բիկ

ՄՈՒՔԹԱՅ ՆԱՄԱԿ

Իմ ազիզ մազիզ
քոր տղայ
Մարգար աղա
Ղալայչի!

—

«Իզիթն աղի էշիդ ուզոնի զեօրմա» առում է Թրքական առակը. հէր օրհնած ես քեզանով էի պարծենում. քո արևոմը էի երդւում. ամեն օրւայ աղօթքումս քո կեանքն էի օրհնում ու երկարակեցութիւն խնդրում Ուխտանէս հայր սուրբից. բայց բանից դուրս է գալիս, որ դու էլ ուրիշ թաւուր մարդ իս ըլել. քեռուդ անունը կոտրող անղէյրաթ մարդ իս ըլել։ Տօ, անաշէն. հէչ որ խելք չունենաս էլ, բա չէ՞ր կարող մի քիչ կլէկ բերել տալ Բաթումի Օրմանեան սրբազանի աչքի լոյս Մելոնց տէրտէրից ու խելքդ մի քիչ կլեկէիր, որ գրածներդ էլ մի քիչ շէնք ու շնորքով ըլէին, որ գրածներդ մարդու բէյնում մրտնէին։ Հիմի էդ ինչ հալի ես հասցրել Ղարսի խեղճ տէր Մինաս բարային, որ «ժամ շինելու համար, ամիսը տասը ժուր ժողով էնել կըտաս, «մէջը փուչ, օխտը հատիկ։

Բաս հէնց լաւ խրատ ու խորհուրդներ ես տալի խալխին—թէ «ժամ շինելու դայդէն» էն է, որ երկու արշ վերցնէք և գնաք Բագու, ախ սխալեցի—Բաթում էի ուզում ասել և ուրիշ քաղաքներ ու պար ածէք.հաւաքած փողով օխտը ժամ կշինուի։ Տօ, աֆերիմ բաջողլի. բա որ էդ խելքը ունիս, էլ խի՞ ես չարչարում էդ խալխին, որ 20—30 տարի է չեն կարողանում իրանց ժամը շինել. բա մեղք չեն դրանք, բա դրանց մեռելները պատարագի երեսը ո՞ւրտ էն-ուեանում։ Բաս չէ՞ որ սրանից մի երկու երեք տարի առաջ գրել էիր, որ Էարա Եկաբ Օրրորդ-ժորիորդներ, օյին-մօյին սարքեցին, տէրտէրներն էլ բիլեթը ծախծրխեցին ու... ժամը դեռ կիսատ է։ Բաս աղա դարեցիք խի՞ չեն օրինակ վերցնում քարվանսարեցիներից, որ քու խրատով համ ժամը շինեցին—էն էլ մեռելը կտրւել է, համ էլ ժողովրդական տուն շինեցին, ուր զետեղելու են գրադարան-ընթերցարանը և մեծ դահլիճ—բեմով։

Օրերումս մեր գեղի երիտասարդները մտադիր են մի ներկայացում սարքել յօգուտ Ղարսի Նոյի տաբւանից դէսը կիսատ մնացած ժամի. միայն գանձապահ չեն իմանում, ում նշանակենք, որ հաւաքած փողը անկորուստ տեղ հասցնի. այս մասին ինչ կասես, բաջողլի։

Թէ էս էլ չի օգտիլ ձեզ, մենք կուղարկենք մեր մուհթա մեռել թաղող տէրտէրին ձեզ մօտ. նա գիտէ եղանակը և «ժողով» անելու գաղտնիքները, համ ժամը կըշինի, համ թէ կուզէք Դաւթեան գիւղատնտեսական դպրոցն էլ ձեր քաղաքում բաց կանի։

Մնամ քու քեռի քարվանսարեցի
Մէն Քէ

Պ. ՀԱՐՈՒՍՏԵԱՆԻՆ

—

Մի մեծ յանցանքի համար
Դատւում էիք նա և դու,
Բայց գիտէիր որ փողը
Միշտ ազատում է մարդուն։

Թէ ինչու էր իմ Ծիտիկը—
Յաճախ դուրսը գիշերում,
Եւ թէ ինչու նա ինձ թողնել
Ամենևին չէր ուզում...

Ա՜... ձգտում էր նէ դարձընել
Ինձ յենարան—մի բարիէր—
Որ շուկայում հիւանդ սիրոյ,
Իմ անունով հունձ անէր...
Նամակները ինձ մատնեցին
Արդէն իղձը նէրա սին,
Եւ թէ որքան հոգիներ էր
Զոհել իր մութ կապրիզին.

Նէ իր գեղը թարմ էր պահել
Միշտ սիրային խաղերում,
Շրջապատւած էրօսներով,
Զարձութեան վայրերում.
Եւ ամենքին իր նենգութեան
Կոյր գործիքն էր դարձրել,
Հիմա արդէն իմն էր հերթը,
Ինձ էր ուզում սպասրել։

V

Կառքս պատրաստ կանգնած էի
Բարգ ու բարիանս կապած,
Իսկ Ծիտիկը քօլգէն առած
Ջանս էր ընկել կատաղած...
Գրբացն էլ հճ, տէրն ազատէ,
Բրդի ճիպտով տուր հա տուր...
Այնքան խփեց մէջք ու գլխիս,
Շինեց կատլետ ու դանդուռ...

Վերջը, երբ որ խփեց դնչիս
Մի խիստ ուժգին թարս ապտակ,
Ես սարսափած փորսող տալով
Թագնուեցի թախտի տակ.
Նէ հրէշացած թակում էր ինձ,
Այդ փոշոտ ու մութ խորշում,
Իսկ միւս կողմից Ծիտիկն անգութ
Բեխերիցս էր քաշքշում...

Ճչում էին—«Մուկ դուրս արի՞...
Թէ չէ բանը վատ կըգայ...
—Է՜ թողէք ինձ... խաչը վկայ
Ինձնում ոչինչ մեղք չկայ...
—Իմ մատանին դու ես տարել...
—Վայ, իմ ժանեակն էլ չկայ...
—Ախ Տէր Աստուած այս ինչ դաւ է,
Էս ո՞ւր եկայ, ուր ընկայ...

Վերջը... վերջը բաղդի բերմամբ
Դրկիցները մէջ ընկան,
Կապեցին իմ քիթն ու պռունկ
Ճակտիս դրին պրիմօչկան.
Եւ երբ իմ գօս ու բզկտւած
Մարմինս առան, դուրս բերին,
«Մուկը մեռնի՞...» դիմեց Նուշկէն
Իր ցնորական սրբերին.

Բեխս պոկած, գլուխս բաց,
Մարմինս լի վէրք ու խոց,
Անիծելով Շաւնաբաթը
Հաղիւ հասայ հիւրանոց.
Կորա՜, մեռա՜յ... ու թերթերում
Ֆէլիէտոնի նիւթ դարձայ...
Եւ այդ օրից կարծես արդէն
Ցամառ վշտից ծերացայ։

*
* *

Այնուհետև շատ տարի անց,
Կրկին տեսայ Ծիտիկին,
Ոտից գլուխ սեերի մէջ,
Այլանդակւած ցաւագին...
Սպիները խոր ակօսւած
Դէմքին ճիգով առանձին
Սուր դանակի հարւածներով...
Ինձ շատ, շատ բան ասացին...

Մարիկ

ეროვნული
ბიბლიოთეკა

—Ա՛յ թէ ինչ կարող է անել ժամանակակից մոդայասէր կնոջ շլեապայի ասեղ-շամփուրները, եթէ կամք ունենան։

Աչքով ունքով անելով,
Հասկացրիր քնոդին,
Որ կուղարկես մի ծրար,
Մինչին էլ փող մի հազար։

Հէնց նոյն օրը մութ բանտից
Քեզ ազատ արձակեցին,
Նրան գտնելով յանցաւոր
Հեռու Սիբիր քշեցին։

Փիստոն Ճլթեան

Զինուորական ջիղ

—Ինչ էլ ասէք, պարոններ, բայց այնուամենայնիւ իւրաքանչիւր կին ունի զինուորական ջիղ։

—Գնդապետ, գուք ծաղրում էք։

—Բոլորովին։ Դեռ չեմ ասում այն, որ կին գընդակահար է անում իր աչերով, գրաւում է մարդկանց սրտերը, տանում է փոքր յաղթանակներ և վտանգաւոր վէրքեր։ Նա դեռ 18-ից—25 տարեկան հասակը իր սրտի եօթամեայ կռիւն է մղում բանականութեան դէմ, իսկ 25-ից—55 տարին նա երեսունամեայ կռիւ է մղում դերձակուհիների հետ։

Իսկ յետոյ սկսւում է հին բերդի պաշտպանութիւնը՝ ամեն բան խորտակող յարձակումներից։

Մթթէ սա զինուորական ջիղ չէ։

Խայտառակութիւն

—Ասա տեսնեմ, Մարթա, հաւանեցիր երեկւայ ներկայացումը։ Լաւ էին երգում։

—Շատ լաւ, տիրուհի միայն մի դերասան շատ խայտառակւեց. նա, ճիշտ է, երգեց, բայց, ինչպէս երևում էր լաւ չէր երգել՝ որ ստիպեցին երեք անգամ կրկնել։ Խեղճը շատ խայտառակւեց։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

(Մեր սեփ. անթել հեռագրով)

Կ. Պոլիս.—Անսպասելի ցրտերի պատճառով բարեխնամ կառավարութիւնը շատ մտատանջւեց—փաշայական կուսակցութիւնները եկան օգնութեան և հայկական թաղերը կրակի ու բոցերի ճարակ դարձրին։

Այժմ բաւականին տաք է. Շնորհիւ Շարիֆեի. յոյս կայ, որ հայկական գաւառներում էլ նոյն տաքութիւնն ընկնէ։

Թեհրան.—Էքս-շահ Մահմէդ Ալին բարևում է իր բոլոր բարեկամներին, Սաթթարին, Բաղիրին, Եփրեմին, Սարգար Ասադին։

Թեհրան.—Սեփեհդարը սահմանադրութեան ջերմ պաշտպան էր երբ բաստ մտաւ օտար դեսպանատուն։

Ալեաֆինի գղեակ.—Աբդիւլ Համիդը նաւակ է փնտրում, որպէսզի Պոլիս անցնէ և Ելդիզ Քեօսկ մանէ։

Պոստ-Արկղ

Սամարզանդ. պ. Ա. Մ-ին.—Դուք ասում էք թէ Աշոտ Աթանասեանը ինչ ասաց վերջը՝ մեր պատասխանից յետոյ՝ «Գիւղատնտեսական դպրոցների շուրջ» կարեկատուրայի մասին, որի առթիւ նա „բռունցքներ" էր պատրաստել։

Ճշմարիտն ասած, մենք էլ չգիտենք. մենք մինչև հիմիկս էլ սպասում ենք ճիշտ այնպէս՝ ինչպէս և դուք։

Նման խոսողներ, յոխորտացողներ բարեկամ մենք շատ են տեսել, որ «համփսոնների» շրջանում «հարցեր» են հրապարակ հանում և երբ պատասխան են ստանում—մկան որջեր են փնտրում։

Ալէքսանդրապոլ. պ. Վ. Բ.—Կարդացէք վերի պատասխանը։

Ջէբրայէլ պ. Ս. Ճադիկեանին.—Շատ ճշմարիտ էք ասում։

Նուխի. Բ. Ռ.—Ձեր յօդուածից զլուխը չհասկացանք, ոտները տեսնենք—գուցէ բան լինի։

Մոսկւա. Վ. Առէշեանին.—Դուն հոգ իս լօթի, իս լաւ իմ. լաւ կայ։

Բագու. Դեհզալ Աղաբաջուն.—Հաջի Զէյնալ աղա Թաղիևի քէֆը ոնց է. մյ քիր։

Գանձակ. Մոծակին.—Ձենք՝ստացել, էն միրուքիդ պայծառութիւնը վկայ։

Ախալցխա. պ. Մ. Թ.—Ձեր ասած վարդապետին կարգալուծ կանենք։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

40 օր! ՁՐԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկլամ են),

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

Մի ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերագիր վճարով արժէ 1 ր. 10 կոպ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.։

Պատւէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար։

С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56—609, Я. К. Петерсъ. 482 00—10

(ե. հ. շ.)

ԲԺԻՇԿ

ՓԱՆՕ ՄԱՆԴԷՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։

Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

000—126

АТРПЕТЪ

1. **Мамед-Али-Шах**

Народное движеніе въ Персіи ЦѢНА 1 РУБ.

2. **Рахим-Хан**

Смути въ Персіи Цѣна 20 коп.

Во всѣхъ книжныхъ магазинахъ.

10—1

ՊԱՅԱՍԱՆ ԴԵՄ

Նորագոյն նկարներով հայկական քանակով

ՍՏԱՅԻՍՆԴ Է

Ե. Յ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԴԷՊՈՅՈՒՄ

որտեղ և վաճառւում է գործարանային գներով։

Թիֆլիս, Դվորցովաեա փողոց։ 50—3

Первокл. ресторанъ „АННОНА“

„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальнскій струнный оркестръ, съ пѣніемъ,** участіемъ пѣвйцъ —г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спасаться только въ

„АННОНѢ“ 25—12

Հոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

Վ Է Պ

Գինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները։

ԲԻՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ

„ԴԻԼԻ ՊՈՒՋՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻԹՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—12

ԲԺՇԿԱՊԵՏ ՇՈՒՐՈՒՄՅԱՆ

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

հիւանդներ ընդունելու է, ըստ սովորութեան մայիսի 25-ից մինչև սեպտեմ. 10

ԿԻՍԼԱՎՕԴՍԿՈՒՄ

ՕՏԵԼ ԲԵՇՏԱՈՒ

(օ. մ.) 20—14

ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ԶԸԿԱՆ ԱՑԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!

ԵԹԷ Դուք հիւանդ էք սֆիլիսով, տրիպէրով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է օնանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան գաղտնի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միզասեռական օրգաններին», նկարներով և բազմաթիւ բէյցէպտներով մօտ 250 երես։ Գինը ճանապարհածախսով ու վերադիր վճարով 1 ր. 30 կոպ.։ «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ր. 40 կոպ.։ Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով)։ Միակ պահեստը С.-Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К Петерсъ 484 (և. հ. շ.) 0—10

Ի-ԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ

ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՏԻԱՑ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՑ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բէյցէպտ կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպօտի, մուրաբաների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն։ 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերադիր վճարով 2ր 60 կ.։ Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու սննդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելուածով, մօտ 100 երես, նկարներով։ Գինը 1 ռ. 20 կ., երկու գիրքը միասին 3 ռ. 35 կ. (կարելի է մարկաներով)։ պահանջներով դիմել բացառապէս Я. К. Петерсу, С.-Петербургъ, Петербургск. сторона, Большой просп. № 56—609, 483 0—10

(և. հ. շ.)

Типографія «Культура» Баронская 14. Ժամանակաւոր խմբ. Ս. ՄՈՒՐԱՑԱՃԵԱՆ

ՄԱՐԴԿԱՑԻՆ ՆՊԱՏԱԿԸ

Գաղափարների ետեւից.



Ոսկիապաշտ.

Ծափի համար խելք կորցնող.

Կանանց համար հոգի տուող.